ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/60

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.09.2017թ. թիվ 03/26-3/17536-17 գրությամբ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 25.09.2017թ. թիվ ԴՎԱ/3216 գրության հիման վրա, 28.09.2017թ. թիվ 03/26-3/17536-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 28.09.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/17555-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/78» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 3-րդ չափաբաժնով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Այնուհետև սահմանված ժամկետում «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է տեխնիկական բնութագիրը (հավելված 6.1), որից հետո Պատվիրատուի պահանջով այն ուղղվել է և 05.09.2017թ. նորից ներկայացվել է՝ արդեն իսկ շտկված տարբերակով:

Ընկերությունը վերը նշված գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/78» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 3-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքի նկարագիրը և Ընկերության կողմից հավելված 6.1-ով Պատվիրատուին ներկայացված ապրանքի նկարագիրը:

Ընկերությունը գրությամբ հայտնել է նաև, որ վերը նշված համեմատական աղյուսակը ուսումնասիրելուց հստակ երևում է, որ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Ընկերությունը գրությամբ հայտնել է, որ մասնագիտական եզրակացության արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքատեսակը (chappi-շան կեր) չի համապատասխանում Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջներին, այն է՝ սպիտակուցների, հանքային նյութերի, վիտամինների և ընդհանուր սննդային արժեքի պարամետրերը համապատասխան չեն:

Ընկերությունը հայտնել է, որ տվյալ եզրակացությամբ նշված պարամետրերը բացակայում են Ընթացակարգի հրավերից, ավելին Պատվիրատուն Ընկերությանը թե բանավոր, թե գրավոր չի տեղեկացրել նշվածի մասին, այսինքն՝ որ գոյություն ունի նման պահանջներ տվյալ ապրանքատեսակի համար:

Ընկերությունը ամփոփելով վերոգրյալը հայտնել է, որ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն առաջնորդվելով Մրցույթային հրավերի 2.5 կետով, հիմք է ընդունել տվյալ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիրը: Ավելացնելով, որ Ընկերությունը հիմնադրվել է 29.05.2017թ. և Ընկերության միակ աշխատանքային պլատֆորմը հանդիսանում է պետական գնումները և խնդրել է Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 03.10.2017թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ հայտնած դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.09.2017թ. թիվ ԴՎԱ/3216 գրությամբ ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/78» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/78» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերոնշյալ չափաբաժնով ապրանքի տեխնիկական բնութագրերի քննարկման արդյունքում պարզվել է, որ նրանք տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրից և համարժեք չեն դրան: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկելու վերը նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել են տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները, սակայն համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացության դրանք չեն համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին: Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով մերժել է «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.09.2017թ. ժամը 11:20-ի և 03.10.2017թ. ժամը 11:15-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/60 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/60 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Համեմունքների, սխտորի և շան կերի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/78» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով Ընթացակարգի թիվ 3-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետը սահմանում է հետևյալը.

«3.1 առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին

կցվում է իր կողմից հաստատված՝ ***առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի***:

3. Ընկերությունը հայտի N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/78» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Սույնով «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/78» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարարգիր):

4. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր), 3-րդ չափաբաժնով՝ «Ընտանի կենդանիների կեր /Շների կեր/» գնման առարկայի համար սահմանվել է <<Best in show Hy-Protein>> 27/12 տեսակի չոր կերակուր կամ համարժեք, փաթեթավորումը մինչև 25 կգ պարկերով, նորմալ ակտիվության շների համար: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ:

Տեխնիկական բնութագրի ծանոթության մեջ նշված է՝ շան կերի յուրաքանչյուր պարկի վրա պետք է փակցված լինի պիտակ, որի վրա պետք է դրոշմված լինի՝

- Արտադրող ձեռնարկության անվանումը

- Արտադրանքի անվանումը, տեսակը
- Արտադրության ժամկետը
- Մատակարար ձեռնարկության անվանումը
- Պահպանման ժամկետը
- Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո
- Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
- ՊՆ կարիքների համար: Վաճառքի ենթակա չէ:
- Պարկերի և պիտակների վրայի գրառումները պետք է դրոշմված լինեն տեսանելի վայրում, տվյալ ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չեն թույլատրվում:
- Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
- Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումը արգելվում են:

5. «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 6.1-ով Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ Chappi с говядиной 15 кг տեսակի չոր կերակուր փաթեթավորումը 15 կգ պարկերով, նորմալ ակտիվության շների համար»: Բաղադրիչները-ընտրված հացահատիկային մշակաբույսեր, մսամթերք, հավի միս, արևածաղկի ձեթ, կենդանիների ճարպեր վիտամիններ և հանքանյութեր: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ:

Տեխնիկական բնութագրի ծանոթության մեջ նշված է՝ շան կերի յուրաքանչյուր պարկի վրա պետք է փակցված լինի պիտակ, որի վրա պետք է դրոշմված լինի՝

- Արտադրող ձեռնարկության անվանումը
- Արտադրանքի անվանումը, տեսակը
- Արտադրության ժամկետը
- Մատակարար ձեռնարկության անվանումը
- Պահպանման ժամկետը

- Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո
- Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
- ՊՆ կարիքների համար: Վաճառքի ենթակա չէ:
- Պարկերի և պիտակների վրայի գրառումները պետք է դրոշմված լինեն տեսանելի վայրում, տվյալ ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չեն թույլատրվում:
- Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
- Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումը արգելվում են:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և դրանցում կան անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են ծանոթություն դաշտը, ինչպես նաև Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրերում նշված է Best in show Hy-Protein 27/12 տեսակի չոր կերակուր կամ համարժեք: Անհրաժեշտ է հստակեցնել ներկայացրած տեխնիկական բնութագրերը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտության կիրառումը: Գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և Օրենքով սահմանված կարգով մասնակցին առաջարկել շտկելու անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է ծանոթության դաշտին վերաբերվող անհամապատասխանությունը և առաջարկել է Chappi с говядиной 15 кг տեսակի ապրանք: Քանի որ 3-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը տարբերվում էր հրավերով սահմանված տեխնիկական բնութագրից անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել մասնագիտական եզրակացություն: 14.09.2017թ. մուտք 514/2682 գրությամբ ներկայացվել է մասնագիտական եզրակացություն համաձայն որի «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի 3-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի

տեխնիկական բնութագիրը համարժեք չէ հրավերի պահանջներին: Ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ մասնակցի հայտը մերժվել է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.09.2017թ. թիվ 03/26-3/17536-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.09.2017թ. թիվ ԴՎԱ/3216 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն,***

արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝***

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Համեմունքների, սխտորի և շան կերի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/78» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով Ընթացակարգի թիվ 3-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետը սահմանում է հետևյալը.

«3.1 առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ ***առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի***:

Ընկերությունը հայտի N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/78» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Սույնով «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/78» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը,

արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի, 3-րդ չափաբաժնով՝ «Ընտանի կենդանիների կեր /Շների կեր/» գնման առարկայի համար սահմանվել է <<Best in show Hy- Protein>> 27/12 տեսակի չոր կերակուր կամ համարժեք, փաթեթավորումը մինչև 25 կգ պարկերով, նորմալ ակտիվության շների համար: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ:

Տեխնիկական բնութագրի ծանոթության մեջ նշված է՝ շան կերի յուրաքանչյուր պարկի վրա պետք է փակցված լինի պիտակ, որի վրա պետք է դրոշմված լինի՝

- Արտադրող ձեռնարկության անվանումը
- Արտադրանքի անվանումը, տեսակը
- Արտադրության ժամկետը
- Մատակարար ձեռնարկության անվանումը
- Պահպանման ժամկետը
- Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո
- Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
- ՊՆ կարիքների համար: Վաճառքի ենթակա չէ:
- Պարկերի և պիտակների վրայի գրառումները պետք է դրոշմված լինեն տեսանելի վայրում, տվյալ ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չեն թույլատրվում:
- Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
- Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումը արգելվում են:

«Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 6.1-ով Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ Chappi с говядиной 15 кг

տեսակի չոր կերակուր փաթեթավորումը 15 կգ պարկերով, նորմալ ակտիվության շների համար»: Բաղադրիչները-ընտրված հացահատիկային մշակաբույսեր, մսամթերք, հավի միս, արևածաղկի ձեթ, կենդանիների ճարպեր վիտամիններ և հանքանյութեր: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%: Ապրանքի հանձնման ժամանակ պետք է հետը ներկայացվի լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված որակի սերտիֆիկատ:

Տեխնիկական բնութագրի ծանոթության մեջ նշված է՝ շան կերի յուրաքանչյուր պարկի վրա պետք է փակցված լինի պիտակ, որի վրա պետք է դրոշմված լինի՝

- Արտադրող ձեռնարկության անվանումը
- Արտադրանքի անվանումը, տեսակը
- Արտադրության ժամկետը
- Մատակարար ձեռնարկության անվանումը
- Պահպանման ժամկետը
- Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո
- Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
- ՊՆ կարիքների համար: Վաճառքի ենթակա չէ:
- Պարկերի և պիտակների վրայի գրառումները պետք է դրոշմված լինեն տեսանելի վայրում, տվյալ ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չեն թույլատրվում:
- Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
- Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումը արգելվում են:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ հրավերով պահանջվող որոկավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և դրանցում կան անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են ծանոթություն դաշտը, ինչպես նաև Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի

մասով «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրերում նշված է Best in show Hy-Protein 27/12 տեսակի չոր կերակուր կամ համարժեք: Անհրաժեշտ է հստակեցնել ներկայացրած տեխնիկական բնութագրերը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտության կիրառումը: Գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և Օրենքով սահմանված կարգով մասնակցին առաջարկել շտկելու անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է ծանոթության դաշտին վերաբերվող անհամապատասխանությունը և առաջարկել է Chappi с говядиной 15 кг տեսակի ապրանք: Քանի որ 3-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը տարբերվում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրից անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել մասնագիտական եզրակացություն: 14.09.2017թ. թիվ 514/2682 գրությամբ ներկայացվել է մասնագիտական եզրակացություն համաձայն որի «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի 3-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը համարժեք չէ հրավերի պահանջներին: Ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ մասնակցի հայտը մերժվել է:

Ամփոփելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից հայտի Հավելված N 6.1-ով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքի ամբողջական նկարագրին, այսինքն՝ Ընկերության կողմից հայտի Հավելված N 4՝ ներկայացված հայտարարությունը՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին, համապատասխանում է իրականությանը:

Ուստի նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» << օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ << գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության 28.09.2017թ. թիվ 03/26-3/17536-17 գրությամբ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00166341) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ